ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**

   Հակոբ Արշակյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Նիժնի Նովգորոդ (Ռուսաստանի Դաշնություն), 2020թ. սեպտեմբերի 23-25-ը:

4. **Հրավիրող կողմը.**

   Եվրասիական տնտեսական միության ներքին շուկաների, տեղեկատվայնացման, տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների նախարար Գեղամ Վարդանյանի հրավերով:

5. **Գործուղման նպատակը.**

   Մասնակցություն «Արտադրողական Ռուսաստանի թվային արդյունաբերություն 2020» համաժողովի շրջանակներում անցկացվող «ԵԱՏՄ թվային հարթակ՝ երկրների համագործակցություն» թեմայով պանելային նստաշրջանին:

6. **Քննարկված թեմաները.**

   «Արտադրողական Ռուսաստանի թվային արդյունաբերություն 2020» համաժողովի շրջանակներում կազմակերպված «ԵԱՏՄ թվային հարթակ՝ երկրների համագործակցություն» թեմայով պանելային նստաշրջանի ընթացքում ներկայացվել են ԵԱՏՄ երկրներում թվային հարթակների ստեղծման մոտեցումներն ու հեռանկարները, դրանց անհրաժեշտությունն ու արդիականությունը, ինչպես նաև ընդհանուր ծառայությունները, որոնք կարող են հիմք հանդիսանալ ԵԱՏՄ-ում թվային հարթակների զարգացման համար:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

2020թ. սեպտեմբերի 24-ին Նիժնի Նովգորոդում տեղի ունեցած «ԵԱՏՄ թվային հարթակ՝ երկրների համագործակցություն» թեմայով պանելային նստաշրջանի ընթացքում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Հակոբ Արշակյանը ներկայացրել է Հայաստանում մինչև 2025թ. ձևավորված թվայնացման ռազմավարության հիմնական ուղղությունները՝ կարևորելով ԵԱՏՄ երկրների հետ ակտիվ համագործակցությունը, փորձի փոխանակումը և համատեղ ծրագրերի իրականացումը՝ առավել զարգացած թվային ենթակառուցվածքներ ունենալու տեսանկյունից: Նախարարը նշել է նաև, որ Հայաստանն ակտիվ համագործակցում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և ԵԱՏՄ երկրների հետ՝ ԵԱՏՄ թվային օրակարգի բարձր մակարդակով իրականացման համատեքստում:

Միջոցառման ընթացքում Հակոբ Արշակյանի կողմից կարևորել է նաև ԵԱՏՄ երկրների համար մեկ ընդհանուր թվային հարթակի ստեղծումը: Նա ներկայացրել է հարթակի հետ կապված իր տեսլականը, կարևոր բաղադրիչները՝ ԵԱՏՄ անդամ երկրների կողմից իրականացվող քաղաքականությունից, ընթացիկ և մշակման փուլում գտնվող ծրագրերից մինչև օրենսդրական կարգավորումներ, մասնագիտական-աշխատանքային խմբերի մասին տեղեկատվությունից մինչև միջպետական թվային ծառայությունների մասին բազմալեզու տեղեկատվություն:

Նախարար Արշակյանն իր ելույթում անդրադարձել է Հայաստանում պետական կառավարման ոլորտում թվայնացման ռազմավարության մշակման ուղղությամբ տարվող աշխատանքներին: Նա նշել է, որ շուրջ 10 տարի է, ինչ երկրում գործում է www.e-gov.am թվային հարթակը, որը ոչ միայն տարբեր ծառայությունների առցանց մատուցման հնարավորություն է ընձեռում, այլև հանդիսանում է նորմատիվ իրավական ակտերի ռեեստր: 2021թ. հունվարից կմեկնարկեն միասնական թվային հարթակի ստեղծման աշխատանքները, ինչը ենթադրում է ծավալուն աշխատանք մի քանի ուղղություններով. միջազգային փորձի և ներկա իրավիճակի ուսումնասիրություն, մեկ ընդհանուր հայեցակարգի, օրենսդրական կարգավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի մշակում, ծրագրային ապահովման մշակում և մեկնարկ:

Նախարարը նշել է նաև, որ ԵԱՏՄ միասնական թվային հարթակի ստեղծման համար լավ հիմք կարող է դառնալ Ինտեգրված տեղեկատվական համակարգը՝ նախատեսված երկրների միջև տեղեկատվության և էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համար:

Պանելային նստաշրջանին մասնակցում էին նաև Բելառուսի Հանրապետության կապի և տեղեկատվայնացման նախարար Կոնստանտին Շուլգանը, Ղազախստանի Հանրապետության թվային զարգացման, նորարարության և աերոտիեզերական արդյունաբերության նախարար Մուսին Բատիրբեկովիչը, Ռուսաստանի Դաշնության թվային զարգացման, կապի և զանգվածային հաղորդակցության փոխնախարար Մաքսիմ Պարշինը, Ղրղզստանի Հանրապետության տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի պետական հանձնաժողովի նախագահ Իսմաիլով Զպարովիչը, ում հետ Նախարար Արշակյանը հանդիպումներ է ունեցել և քննարկել առկա ու հնարավոր համագործակցության եզրերը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Համաժողովի շրջանակում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Հակոբ Արշակյանի, «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրեն Հայկ Կարապետյանի և «Ռուսաստանի փոստ» բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրեն Մաքսիմ Ակիմովի հանդիպման ընթացքում համաձայնագիր է կնքվել «Հայփոստ» ՓԲԸ-ի և «Ռուսաստանի փոստ» ԲԸ-ի միջև, որով նոր իջեցված դրույքաչափեր են սահմանվել՝ Հայաստանի և Ռուսաստանի փոստային ծառայությունների միջոցով առաքանի ուղարկելու համար:

Ըստ համաձայնագրի՝ 2020թ. հոկտեմբերի 1-ից Հայաստանի և Ռուսաստանի բնակիչների համար ծանրոցների փոխադրման սակագները Երևանից Մոսկվա, Մոսկվայի մարզ և հակառակ ուղղությամբ կնվազեն գրեթե 3 անգամ. մինչև 1 կիլոգրամ քաշով ծանրոցը կարժենա 2 950 դրամ (420 ռուբլի) նախկին 8 820 դրամի (1 200 ռուբլի) փոխարեն: Ամեն հավելյալ կիլոգրամը կարժենա 1 250 դրամ (180 ռուբլի): Հայաստանի մյուս մարզերից Ռուսաստանի այլ մարզեր ծանրոցների փոխադրման սակագինը կնվազի մեկ ու կես անգամ. այն կկազմի 1 կիլոգրամի համար 6 000 դրամ (860 ռուբլի) նախկին 8 820 դրամի փոխարեն, իսկ ամեն հաջորդ կիլոգրամի համար գինը կկազմի 1 500 դրամ (215 ռուբլի):

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

Հակոբ Արշակյան

29.09.2020թ.